Թ. ՏԱՐԻ 2944 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 16 ՏԻՊ 4386 — 24 ՆՈՅԵՄԲԵՐ 1893 — 28 ՀԻՄԱԶԻՒ, ԻՎԼԻՍ 1311 — ՇԱԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿԱԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

دریعلیه غلطه آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐՇԱԿԱԼՔ
## ՕՐԱԳԻՐ
## Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արժէք | 150 |
| » » Վեցամսեայ » » | 75 |
| » » Եռամսեայ » » | 40 |
| Օտար երկիրներէ Տարեկան » | 56 |
| » » Վեցամսեայ » | 28 |
| Ընտիր թուղթի վրայ մասնաւոր օրագիր Տարեկան Սմ. Ոսկի | 2 |
| Գաւառաց թղթատարի ծախքը վճարեալ Դրուշ | 50 |

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՆՈՅՄ. 24/7 ԴԵԿՏ. 1893

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

### ՈՐԲԱՆՈՑ

Բ.

Որբանոցի հաստատութիւնք մեր մէջ թէ թուով սակաւ են և թէ կեցցածները նպատակայարմար չեն։ Կ. Պոլսոյ մէջ միայն Խասգիւղի Որբանոցն և Ս. Փրկչի Որբանոցը կան, և գաւառաց մէջ, եթէ չենք սխալիր, միայն Սեբաստիա և Վան ունին այսպիսի հաստատութիւններ։ Մէկ մէկ կամ երկերկու հաստատութիւններ ալ մեր հռոմէական և բողոքական ազգակիցք ունին հոս կամ գաւառաց մէջ։

Այս ամէն հաստատութեանց մէջ, որքերը պատսպարեն, այսինքն՝ անոնց մանկութիւնը ֆիզիքապէս պաշտպանելը գլխաւոր նպատակէա համարուած է։ Տարրական նախակրթութիւն մը բաւ կը նկատուի, որ զիրենք ո՛չ մէկ գործի կը պատրաստէ, ո՛չ մէկ նպատակի կ'ուղղէ զիրենք։ Լուսահոգի Սրբուհի մայրապետ իւր պատսպարած որբուհիներն եթէ յաջողէր ամուսնացնել, ամենամեծ բարեբաստութիւն կը համարէր։ Անշուշտ բարեգործութիւն մ'էր այս, որ իւր հոգին ու միտքը գրաւելով համակ, տեղի չէր թողուր տարբեր ըմբռնումներու, աւելի լայն հայեացքներու։ Բայց ինչո՞ւ համար չպահանջել որ հանրութեան նպաստով մնած որբուհիք ո՛և իցէ կերպիւ օգտակար ըլլան հանրութեան։ Որբանոցէն մեկնելով և տան մը մէջ փակուելով, ապարեզ չեն գաներ այլ եւս։ միջոց, գրգիռ, շարժառիթ չեն ունենար հանրութեան օգտակար ըլլալու։ Ո՞րչափ նպատակայարմար պիտի ըլլար եթէ այս որբուհիներէն յառաջ գային վարժուհիներ, մանկապարտէզի վարժուհիներ մանաւանդ, և գթութեան—քոյրեր, ո՛չ թէ ի հարկէ մայրապետ, այլ և աշխարհիկ գթութեան—քոյրեր, որք, ամուսնացեալ ըլլան թէ ոչ, հիւանդներ դարմանելն իրենց գործ— կամ բարեգործութիւն—ընտրեն։ Այս տեսակ իդեալի գերերու համար քաջայարմար գերակատարներն Ազգին որբուհեաց մէջէն պիտի գտնուէին անշուշտ։ Եթէ այս բարձր իտէալն ընդունուէր իբրեւ Սրբուհի մայրապետին ձեռակերտին նշանաբանը, պէտք կ'ըլլար փոփոխել Որբանոցին ընթացքն, աւելի կարեւորութիւն տալով ուսմանց ճիւղին, եւ անտի պատշաճ հաստատութիւններու տալով աշակերտուհիներ։ Հիմակ անոնց ստացած ուսմունքն յոյժ տարրական բան մ'է, և աւելի կը սովրին գործնական վարժութեամբ և ծառայութեամբ Որբանոցին մէջ՝ ընտանեկան խոնարհ յարկի մը անտեսութիւնն, որ անշուշտ արհամարհելի ծանօթութիւն մը չէ, բայց վերջապէս մեր դրած իտէալէն պակաս բան մ'է։ Ամէն անգամ որ հարս մեկնէ Որբանոցէն, իւր թիւը կը տրուի, —30րդ, 31րդ, 32րդ հարսն, — և շատեր վարժուած են նկատելու թէ ասով ամէն բան լմնցաւ։ Իսկ մեր տեսակէտով, աւելի ուրախ պիտի ըլլայինք եթէ կարենայինք արձանագրել թէ Խասգիւղի Որբանոցէն այս տարի 10րդ կամ 20րդ վարժուհին դուրս եկաւ և պաշտօն ստանձնեց այն ինչ վարժարանին մէջ, —նոյն իսկ Որբանոցին յարակից գաւուղով Ս. Ներսեսեան աղջկանց վարժարանին մէջ, ուր, որպէս գիտենք, Որբանոցի ո՛չ մէկ աշակերտուհի, Սրբուհի Մայրապետի ո՛չ մէկ սանուհի ցարդ վարժուհւոյ պաշտօն վարած է, մինչ մեք շատ բնական պիտի գտնէինք որ փոխանակ դուրսէն վարժուհի բերելու, Ս. Ներսեսեան վարժարանն իւր ելմտացոյցէն վարժուհիներու բաժինն յատկացնէր Որբանոցի աշակերտուհիներուն։ Իրաւ է սակայն որ առ այս պէտք կ'ըլլար որ այն աշակերտուհիք նախակրթարան մը, նոյն իսկ մանկապարտէզի մը, վարժուհիութիւն ընել կարենալու չափ պատրաստութիւն ստացած ըլլային։ Բայց օգտակար նորութիւն մ'ընելու համար երբեք շատ ուշ չէ։ Հանգուցեալ մայրապետին ձեռնարկն իւր յաջորդք կրնան կատարելագործել։ Որբանոցն իրեն համար տակաւ առ տակաւ նոր ուղղութիւն մը կրնայ գծել։ Եւ ազգային մէջ անցեալն աւելի օգտակար կրնայ ըլլալ ո՛չ միայն անհատական որբուհիներու և այլ բովանդակ հայ հասարակութեան, կարեւոր սատարներ ընծայելով անոր կրթական ու մարդասիրական գործերուն։ Ասոր համար թերեւս իւր ծախուց վրայ յաւելում մ'ընել հարկաւոր։ Արդէն կ'ըսուի թէ իւր եկամտացոյց հաւասարակշիռ վիճակի մէջ չէ։ Բայց երբ գիտուի թէ Որբանոցն աւելի օգտակար շաւղի մը մէջ մտեր է, չենք կարծեր թէ բարեսէր նուիրատուք քիչ մ'աւելի զոհողութիւն ընելէ խորշին։

* * *

Բայց ինչո՞ւ զարմանք որ առաքինազարդ կէն մը, բարեգործութեան եռանգով լցուած, բայց իմացական բարձր մշակութենէ զուրկ, չէ կրցեր աւելի բարձր կռուանի մը վրայ դնել իւր հիմնած օգտակար մէկ հաստատութիւնն, երբ աւելի զօրեղ գլուխներ ու ձեռքեր աւելի մեծ արդիւնք չեն կրցած ստանալ աւելի ընդարձակ հաստատութեան մը մէջ։ Ս. Փրկչի Որբանոցին աշակերտներէն ոմանք անհատական հոգաբարձուներու բարերարութեամբ և առատաձեռնութեամբ գրուած են շահաւէտ ասպարէզներու մէջ, ուսնելով ազատական արուեստներ, կամ զարդապէս շուկայն գործի մտած են։ Այս մասին չեն մոռցուած մանաւանդ ողբացեալ Կիւմիւշկիրտան էֆ.ի բարեգործութիւնք։ Բայց այս անհատական բարիքներէ զատ, Որբանոցի յայտագիրը կարելի չէ եղած հասցնել այնպիսի բարձրութեան մը որ ընթացաւորտ որբերն իբրեւ նախակրթարանի ուսուցիչ կարենային գործածուիլ սովորապէս, աղքատ թաղերու և գաւառներու մէջ ուսուցչի յարաճուն սովուն յագուրդ տալով, կամ ապահովապէս իրենց ապրուստը շահէին՝ ո՛և իցէ ուսում մը կամ մանաւանդ արհեստ մը հմտանալով սովրած ըլլալով։ Ազգին այս մեծագոյն Որբանոցին կրթական վիճակին վրայ քանիցս մանրամասնօրէն խօսած ենք այս էջերու մէջ և այլուր, պահանջելով որ նպատակ մը որոշուի Որբանոցին համար, զոր վարչական մարմինք միահամուռ նկատած են միշտ իբրեւ պարզ պատսպարան մը որբերուն համար, ուր անոնք կը պահուին մինչեւ որ մէկու մը որդեգիր արուին, որ ստանձնէ անոնց նիւթական ու բարոյական ապագային հոգածութիւնը։ Զենք մեղադրեր այս վարչական մարմինները — Քաղաքական ժողով, Ցընտեսական Խորհուրդ, Ուսումնական Խորհուրդ, Հոգաբարձութիւն, Հիւանդանոցի որոշեալ ելմտացոյցէն աւելի բաժին մը հանել չկրնալնուն համար Որբանոցին։ զի փորձառութիւնը ցուցած է գժբախտապէս որ երբ հոգաբարձուները ձեռնարկեր են Որբանոցի ճիւղը զօրացնել, միւս ճիւղերն, որք աւելի անմիջական կերպիւ կապակցութիւն ունին Հիւանդանոցի բուն նպատակին հետ, չարաչար վնասուած են։ Ուստի, գրեթէ տասն տարիէ հետէ կը պահանջենք «Որբանոցը բաժնել Հիւանդանոցէն, և նախակրթարանի յայտագրով մը Արհեստանոցի վերածել զայն, ուր որբերն արհեստ սովրելով, ո՛չ միայն իրենց օրապահիկը կարենան ճարել օր մը, այլ և նմանօրինակ Որբանոց-Արհեստանոցներու կազմակերպութեան սատար կարենան ըլլալ»։ Մենց որ, արհեստներ միայն որբերու համար եղած չեն։ Ցայտնի է թէ Եւրոպիոյ ամէն կողմը, քաղաքներու թէ գիւղերու մէջ, շատ մը նախակրթարանք օժտեալ են նաեւ արհեստական նախակրթութեան դասընթեմբ մը, գործնական վարժութեան համար արհեստանոցի սենեակներով, ուր աղայք կը սովրին առաւելապէս ի բենց գտնուած տեղւոյն արհեստներն, և եթէ արհեստաւոր վարպետներ ալ չեղեն դպրոցէն, գէթ գործներու կիրառութեան վարժուած կ'ըլլան, և ամէն պարագայի մէջ արհեստի ճաշակ մը ստացած կ'ըլլան, որ օր մը զիրենք յառաջ կրնայ մղել նոյն ճիւղին մէջ, և եթէ տարբեր ճիւղերու ալ հետեւին, ձեռաց վարժութիւնն իրենց համար տեսակ մը մարմնամարզ եղած կ'ըլլայ։ Այսպիսի ուսում և վարժութիւն մը Ազգին մէջ տարածելու համար մէկ հատիկ հաստատութիւն կրնար ըլլալ Ս. Փրկչի Որբանոցը, զոր ապաքէն անցեալին մէջ, մէկ քանի անգամ, արհեստանոցի վերածելու ձեռնարկներ ընելով, հէն հոգաբարձուներ ընդ ապտ նշմարած են այս ճշմարտութիւն, բայց յարատեւութիւն և մանաւանդ կարողութիւն պակսած են իրենց։ Մինչեւ այս օրս, Որբանոցի սաներէն աչկերտներ կը տրուին կօշկակարի վարպետի մը որ հոն կը բանի, բայց ամենէն անյաջող աշակերտաց մէջէն զատելով, և վճռելով թէ ուսման անընդունակ է։ Այս թերի ըմբռնումներու եթէ գիտական ողջամիտ տեսութիւն մը յաջորդէր, և պէտք եղած դրամական միջոցը գտնուէր, անկարելի չէր արհեստանոցի վերածել Որբանոցն։

* * *

Հա՞րկ է այժմ յիշեցնել թէ այս բարեփոխում նուրեան էֆ.ի վարչապետութեան օրով օրինական հանգամանք ստացած է, և որոշուած է առ այն յատկացնել սովելոց խնամատարութենէն աւելցած գումարին չահն։ Հա՞րկ է կրկնել թէ այն գումար քանի տարիէ հետէ ճարտարապէս շահագործուած է՝ Թիճարէլմ Խանի և յարակից կալուածներուն գնմամբ և նորոգմամբ։ Թէեւ հաշիւը մեր տեսած չենք, բայց կ'ենթադրենք որ արդի տարեկան հասոյթն հասած է 1,000 ոսկւոյ, որ յիշեալ օրինական տրամադրութեամբ որոշեալ սահմանակէտն է՝ գործածման սկսելու համար։ Գիտենք որ հրաժարեալ հոգաբարձուք վատաքած են այս գումարն իւր նպատակին յատկացնել, և այդ մտօք դիմումներ ալ ըրած են։ Բայց առաջին պէտք ճանչուած էր Որբանոցի ուրոյն շէնքի մը կառուցումն, և այս է որ իրենց ամենուն կամքէն անկախ պատճառներով ցարդ ի գլուխ չէ եղած։ Աւելի օգտակար խորհուրդ մը զոր աչքէ վրիպեցնելու չեն Պատրիարք և Ազգ. Վարչութիւն։ Կեցած գժուարութիւնք կը յուսանք որ անբառնալի չեն, և մինչեւ իսկ եթէ ստուգուի թէ Որբանոցի ուրոյն շէնք մը ի մտոյ չենք կրնար ունենալ, Թիճարէլմ Խանի հասոյթէն գոնէ մաս մը գումար ինչո՞ւ այժմէն չյատկացուի Որբանոցի երմացոյցին վրայ, որպէս զի որբերուն քիչ մը աւելի խնամեալ կրթութիւն կարենայ տրուիլ, աւելի կարող և ի հարկին թուով ալ աւելի ուսուցիչներու ձեռամբ։ Այս օրերս ծանուցինք թէ Հոգաբարձութիւնն Ուսումնական Խորհուրդէն խնդրած է Որբանոցի պահանջումներուն և դրամական միջոցներուն համապատասխան ծրագիր մը ուսմանց։ Բայց եթէ դրամական միջոցները քիչ մը աւելի ցուցուին այնպիսի նպաստով մը, անշուշտ Ուսումնական Խորհուրդն ալ աւելի օգտակար ծրագիր մը կրնայ շինել։ Կը լսենք նաեւ թէ Որբանոցին սակաւաթիւ աղջկանց ճիւղն ալ, որ միւսէն աւելի կարօտ մնացած էր խնամքի, այս օրերս վերակազմել ձեռնարկուեր է՝ կարող վարժուհի մը բերուելով։ Ասոնք ազէկ, բայց թերի միջոցներ են։ Վարչական պէտք եղած ջանքերը ժամանակ է կատարել՝ Որբանոցին որոշ նպատակ մը յատկացնելու համար, որով եւեթ ազգային արդիւնաւոր հաստատութեանց մէջ կրնանք դասակարգել զայն։

Բ. Բ.

### ԴԱՐԻԴ

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԿԱՒԿԱՍԻՈՅ ՔԱՐԻՒՂԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԱՑ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՏՆԱՑ. — ՄՕՏԱԼՈՒՏ ԲԱՐԶՐԱՑՈՒՄ ՔԱՐԻՒՂԻ ԳՆՈՅՆ. — ՔԱՐԻՒՂ՝ ՄԵՆԱՎԱՃԱՌ.

Բ.

Այս տեղեկութիւններէն պէտք չէ սակայն ապահովապէս հետեւցնել թէ քարիւղի առեւտուրը պիտի բարւոքի, և քիչ օրէն 40—50 դրչի պիտի գնէք տաուկը, զոր այսօր 27ով կրնաք ուզածնուդ չափ առնուլ, ձեր մառանն յանձնելի։ Կը մնայ դեռ ստուգուիլ թէ

1. Ռուս գործարանատէրց մեծամասնութիւնն (85 %) արդեօք պիտի ընդունի՞ն միանալ անոնց, որք այս ծրագիրն ընդունած են,

2. Ամերիկայի հետ միութեան առաջարկութիւնն եւս պիտի իրագործուի՞ թէ ոչ։

Այս երկու պայմանաց ո՛րն ալ չյաջողի, միութեան ծրագիրը նոր փորձ մ'ըլլալէ անդին չանցնիր, և մեք առատ ու աժան լոյս կ'ունենանք, մինչեւ որ քարիւղի արտածող մրցակիցք իրենք մուքը մնան։

Ի Պաքու այժմ կան 84 նաւթի գործարան-զարան, որք 1892ին արտասահման զրկած են 55,779,000 փութ քարիւղ, սապէս բաժնուած։

| | | Փ-ի |
|---|---|---|
| 41 | Հայ գործարանք | 19,929,000 |
| 24 | Թուրք-պարսիկ » | 10,543,000 |
| 16 | Զանազան ազգէ » | 6,241,000 |
| 1 | Նոպէլ եղբարց » | 9,610,000 |
| 1 | Ռոչիլտ » | 5,870,000 |
| 1 | Շիպաեվի » | 3,586,000 |
| 84 | » | 55,779,000 |

Իսկ մեծագոյն գործարան զարանները են 11։

| | Անուանք | Փ-ի |
|---|---|---|
| 1 | Նոպէլ եղբարց | 9,610,000 |
| 2 | Ռոչիլտ | 5,870,000 |
| 3 | Շիպաեվ | 3,586,000 |
| 4 | Ս. Մանթաշեանց | 3,059,000 |
| 5 | Կասպեան Ընկ. | 2,703,000 |
| 6 | Թագիեվ | 2,461,000 |
| 7 | Բաքիէլեան | 1,792,000 |
| 8 | Նաղիեվ | 1,669,000 |
| 9 | Լիանոսեան | 1,650,000 |
| 10 | Ասատուրաեվ | 1,482,000 |
| 11 | Պուտաղեանց | 1,378,000 |
| | | 35,260,000 |

41 Հայ գործարանատէրք են հետեւեալներն, իրենց արտածութեան կարգաւ։

| | | Փ-ի |
|---|---|---|
| 1 | Ա. Մանթաշեանց | 3,059,000 |
| 2 | Կասպեան Ընկ. | 2,703,000 |
| 3 | Ռաֆաէլեան | 1,792,000 |
| 4 | Լիանոզեան | 1,650,000 |
| 5 | Պուտաղեանց | 1,378,000 |
| 6 | Ատամեանց | 986,000 |
| 7 | Շամբրտանեանց | 970,000 |
| 8 | Արամեանց | 800,000 |
| 9 | Եղիազարեանց | 796,000 |
| 10 | Ճղնաւորեանց | 560,000 |
| 11 | Մելիքեանց | 550,000 |
| 12 | Գրասիրնիկեանց | 401,000 |
| 13 | Պաղրեանց | 400,000 |
| 14 | Սէրկիեվ | 331,000 |
| 15 | Գարաճոֆ | 300,000 |
| 16 | Գալանթարեանց | 300,000 |
| 17 | Աւագեան | 250,000 |
| 18 | Ունանեան | 250,000 |
| 19 | Անանեան | 240,000 |
| 20 | Ամիրեան | 200,000 |
| 21 | Անասնեանց | 188,000 |
| 22 | Գօչարեանց | 172,000 |
| 23 | Թաչատուրեանց | 171,000 |
| 24 | Մուտաֆեանց | 150,000 |
| 25 | Մ. Տատաեանց | 149,000 |
| 26 | Համբարձումեանց | 135,000 |
| 27 | Արսլանեանց | 116,000 |
| 28 | Բարկանեանց | 110,000 |
| 29 | Եարամիշեանց | 106,000 |
| 30 | Կարապետեանց | 100,000 |
| 31 | Ռոֆաէլեանց | 100,000 |
| 32 | Ղարակեչեանց | 89,000 |
| 33 | Գարայեանց | 78,000 |
| 34 | Տէր Սարգսեանց | 55,000 |
| 35 | Բարսեղեանց | 50,000 |
| 36 | Բարաեանց | 49,000 |
| 37 | Մարգարեանց | 49,000 |
| 38 | Ա. Բարսեղեանց | 48,000 |
| 39 | Թարաեանց | 47,000 |
| 40 | Նաճառեան | 25,000 |
| 41 | Բ. Թարայեանց | 6,000 |

84 գործարանատէրներէ մի միայն 3ն ուղղակի իրենք կ'արտածեն և վաճառականներ ունին իրենց անուամբ արտասահմանի զանազան կեդրոններն։ Ասոնք են Նոպէլ եղբ. Ռոչիլտ և Ա. Մանթաշեանց։ Այս վերջինն առաջին և միակ Հայն է որ ուղղակի կ'արտածէ, և իւր սեպհական շոգենաւերով և նաւերով մանաւանդ Տաճկաստանի և Եգիպտոսի առաջին հայթայթիչն է ցարդ։

ՄԵԼԻՔ ՊԷՅԼԻՔՃԵԱՆ

# ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱԼԻՔԱՆԵԱՆ ԵՐԿԻՐԲ.—Ֆերտինանտ իշխան հրամանագիր մը հանելով յայտարարեց թէ հանգուցեալ Ալեքսանդր Պաղենպերկ իշխանին յիշատակն յաւերժացնելու համար, պուլկարական առաջին զօրագունդն որ ի Սոֆիա՝ այսուհետեւ «զօրագունդ Իշխան Ալեքսանդրի Առաջնոյ» անունը պիտի կրէ, և հանգուցելոյն եղբայր և վեհ. Վիքթորիա Թագուհւոյն փեսայ Հէսէրի Պաղենպերկ իշխան գնդապետի ասպիճանաւ նոյն զօրագնդին պիտի կցուի պատուակալ եղանակ։

ՖՐԱՆՍԷԻԳԵՐՄԱՆԱԿԱՆ.—Անցեալները ծանուցինք թէ գերման անտառապահ մը սպանած էր Ֆրանսացի երկու գաղտորսներ։ Այս մասին Սթրազպուրկի մէջ կատարուած գերմանական քննութեան արդիւնքը տեղեկագրով մը հաղորդուեցաւ Փարիզի գերմանական դեսպանատան, որ զայն մատոյց Ֆրանսական կառավարութեան։ Այս տեղեկագիր կը հաստատէ գերման անտառապահին խօսքը թէ նախ Ֆրանսացիք կրակ ըրին իւր վրայ բայց չկրցան զարկանել։

---

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (98)

## ԺԻՒԼ ԼԵՌՄԻՆԱ

# ԲԱՐԻՔԻ ԳԱՅԼԵՐԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԿԱՐՄԻՐ ԱՏԵԱՆԸ

Մոռցուած չէ անշուշտ որ Թորէս դքսուհիին մէկ նամակովը ժաք ներկայացած էր այն մարդուն տունը, որ իր պաշտպանը պիտի ըլլար և զինքը պիտի վարժեցուներ այն ընկերութեան գաղտնիքներուն, ուր կոչուած էր տեղ մը գրաւել։

Ժաք տը Շեռլիւ՝ Պ. տը Պելէնի կողմէ ընդունուած էր բարեսիրութեամբ մը որ արտաքին կեղծիքներ միայն ունէր։

Երիտասարդը չատ նորավարժ ըլլալով կեանքի մէջ, այս երանգը չէր նշմարեր։ ակից զատ, կը կարծէր թէ երգի մը մէջ կը քալէ։ Անգիտակից թմրութիւն մըն էր որ կ'արգիլէր զինքը՝ շուրջն եղածներն յստակօրէն տեսնել։ Երբեմն կը թուէր իրեն թէ պիտի արթննար, նորէն խնար այն նուաստ կենցաղին մէջ ուր մինչեւ այն ատեն ամէն բան վշտաւոր էր եղած։ այն ատեն անշարժ կը մնար, աչքերն առջեւը յառած, ապասելով այն յիղակարծ կերպարանափոխութեան որ անէութեան մէջ պիտի թաղէր նորէն զինքը։ Բայց վարկեանները կանցնէին։ և միտքէն կ'ըսէր։

—Ճշմարիտ է ուրեմն։ Հարուստ եմ, ազնուական եմ··· Անցեալը մեռած է, և փայլուն ապագան կը բացուի իմ առջեւս···

Եւ, այս կրկներեւոյթներուն մէջէն տարտամ ճառագայթումով մը կերեւար աքանչելի արարածի մը ձեւը, որ կը ժըպտէր իրեն և ձեռք կը կարկառէր։

Վառնդի կը սիրէր Թորէս դքսուհին։ Իրա՞ւ սէր էր։ Մանաւանդ անդիմադրելի քաղձանք մը որ զինք կը ձգէր դէպ այն կինը, յորում կ'ամփոփուէին բոլոր հմայքները գեղեցկութեան, պերճանքի, հարըստութեան։ Այս տարփանք սքանչացումէ առաջ կուգար, և շլացումով կը խառնուէր։ Երիտասարդը բան մը չէր յուսար, չէր համարձակեր իսկ խորհիլ։ բայց երբ այս անունը, ցած ձայնով կրկնուած, կը հնչէր իր ականջին մէջ, ամբողջ մարմնովը կը սարսռար և իր սիրտը կը բաբախէր՝ կուրծքը պայթեցնելու աստիճան։

Պ. տը Պելէն, հնազանդելով Պիքաառի հրահանգներուն, աւելի տեսակ մը հետաքրքրութեամբ քան իրական հնազանդութեամբ, երիտասարդին տրամադրութեանը ներքեւ դրած էր ինքզինքը։

Առաջին ակնարկով, ժաք հաճելի թըւած էր իրեն։

Դուքսին հարցումներուն պատասխանած էր միամիտ պարզութեամբ մը որուն վրայ միւսը ժպտած էր ներքնապէս։ ժաք բան մը չէր ծածկեր։ անկեղծութեամբ կ'ըսէր իրեն կրած անակնկալներն ու երկչոտ վարանումները։ Եւ ամենակատարեալ մուտինը։ Ինչ կապակցութիւն կար այս երկու իրողութիւններուն միջեւ։

Վերջապէս այս ծառայութիւն չէր ներկայացներ բնաւ ոևէ եղեռնական հանգամանք։ Պելէն լրջօրէն ստանձնած էր իր Մենտորի դերը, եւ իր աչակերտը քիչ առ տենուան մէջ աքանչելի կերպով պիտի ներկայանար ընկերութեան մէջ։ Դուքսն, հանգամանք իր եսասիրութեան, չէր կրնար չշահագրգռուիլ վառ տիրտով, գործօն մտքով այս բնաւորութեան նկատմամբ, և գրեթէ կը զգածուէր երախտագիտական թափերէն, որոց հաւատիքը ժաք անգամ դար կ'արտայայտեր իրեն։

Այս էր իրենց կացութիւնն այն օրն ուր Պելէն ամբողջ Փարիզի հետ իմացաւ Մանքալի անցայտացումը։

Անակնկալ հարուած մըն էր այս, որ տաժանելի եկած էր իրեն։ Վերջապէս խաբեայ առուտուր մըն էր ըրած, վանդալ ընդունուած, առաջնորդած, և իբր իր պաշտպանը ներկայացուցած էր մարդ մը զոր չէր ճանչնար··· և խոստացուած փախարինութիւնը կոչնչանար։

Պելէն, ինչ ալ ըլլար ժաք տը Շեռլիւի իրեն ներշնչած վաղանցիկ համակրանքը, բնաւ համ չէր առներ սուրբ Վենսան տը Բօլի դերէն։ Իր գործը չէր ծնողազուրկ տղաքներ քալը առնել···

Ուստի, Մանքալի տան ազէտը ծանուցանող լրագրին վրայ աչք նետելուն պէս, առանց վայրկեան մը կորսնցուցնելու ուզեց անձամբ ստուգել թէ իրողութիւնը ճի՞շդ էր։

Կեղծ Ժերմանդրէին խանութը վազեց։ կը յիշուի թէ աւագակն այս անունով ներկայացած էր, երբ Պելէնը յանկարծակիի բերած էր Սէն փողոցի գետնափորին մէջ։

Արդէն քանի մը օրերէ ի վեր կեղծ գրասեղը ծախած էր իր գիրքերն ու հեռացած էր։

Պելէն Լուի-լը-Կան փողոցը գնաց կառքով։ Լրագրին ծանուցած դէպքը չատ ճիշդ էր։ Խմբագիներուն խառնուեցաւ որք կը կենային մայթին վրայ։

Ցիչոցներ, կատաղի աղաղակներ կ'արձակուէին։ Կողոպտուողները կ'անիծէին զիրենք կործանողները։ Բայց Պելէնը գոհացուցնող խօսք մը բնաւ չի կար։

Բայց, կը մտածէր նորէն, ի՞նչ չարժառիթի հնազանդած էր այդ մարդը։

—Տղայ մը և ապուշ մըն եմ, մրմնաց Պելէն, ազարանքը դուռնալով։ Իմ առաջին գաղափարս ճիշդ էր։ Սա Պ. տը Շեռլիւն այն կանխակա բախտախնդիրներէն է որք ինծի պէս ծեր ազուէներն իսկ կը խաբեն··· ժամանակ է որ վերջ մը դնեմ այս խաղին։

Մինչեւ որ ժաք իրեն յարմար քնակարան մը գտնէր, գուքսը անոր տրամադրութեանը տակ էր դրած իրենին կից յարկաբաժին մը։

Այդ անձուկ միջոցին մէջ հաւաքուած էին ամենն պահանջոտ քմայքը գոհացուցնող բաները։ աշխարհիկ մարդու մը առանձնոյն էր։

Եւ ժաք տեսակ մը մանկային ուրախութիւն կը զգար չատ անգամ ժամերով անշարժ կենալով հոն, իբր թէ իր շուրջն ամէն եղածները տեսիլք մը ըլլային զրոս փոքր շարժում մը, փոքր շունչ մը անկետ կրնար ընել։

Այն առուն ժաք կանուխ արթնցած էր։ բայց ընկղմած էր այն տարտամ հիացման մէջ որ մոգական հմայք մը կը պարգեւէ միտքին։

Աչքերը կիսախուփ, երեւակայութեամբ կը վազէր գոլորշանման և պայտելի երեւոյթի մը ետեւէն որ խոյս կուտար իրմէ։ յետոյ, երբ կանչէր զայն, կանգ կ'առներ և ետին դառնալով իրեն կը կարկառէր բազուկները։

Այն որուն վրայ կը մտածէր, Թորէս դքսուհին էր։

—Պարոն Պելէն, ծանուց մէկէնիմէկ՝ ժաքի ծառայութեան տակ գտնուող սենեկապանը։

Դուքսը, որուն համար, ինչպէս կը հասկցուի, այս մուտքը ձեւակերպութիւն էր լոկ, ծառային ետեւէն ներս մտած էր։

—Ա՜հ, սիրելի բարեկամ, ըսաւ ժաք խնդալով, իրաւ որ կ'ամչնամ դեռ անկողինը գտնուելուս··· մինչ դուք թերեւս աւելի գործ տեսած, աւելի շատ խնդիրներ ուսումնասիրած էք քան ես ամբողջ կեանքիս մէջ··· բայց ես տղայ մըն եմ··· գիտէք··· և կանխաւ համոզուած եմ որ շատ պիտի յանդիմանէք զիս։

Պելէն նախ չպատասխանեց։ աչուընեն առջեւը սեւեւած, առանց ժաքին երեսը նայելու, իր սովորական ջղային չարժումովը կիսամօրուսները կը քաշէր։

Այն ատեն ժաք կանուխ արթնցած էր։ բայց ընկղմած էր այն տարտամ հիացման մէջ որ մոգական հմայք մը կը պարգեւէ միտքին։

Աչքերը կիսախուփ, երեւակայութեամբ կը վազէր գոլորշանման և պայտելի երեւոյթի մը ետեւէն որ խոյս կուտար իրմէ։ յետոյ, երբ կանչէր զայն, կանգ կ'առներ և ետին դառնալով իրեն կը կարկառէր բազուկները։

Այն որուն վրայ կը մտածէր, Թորէս դքսուհին էր։

—Պարոն Պելէն, ծանուց մէկէնիմէկ՝ ժաքի ծառայութեան տակ գտնուող սենեկապանը։

Դուքսը, որուն համար, ինչպէս կը հասկցուի, այս մուտքը ձեւակերպութիւն էր լոկ, ծառային ետեւէն ներս մտած էր։

—Ա՜հ, սիրելի բարեկամ, ըսաւ ժաք խնդալով, իրաւ որ կ'ամչնամ դեռ անկողինը գտնուելուս··· մինչ դուք թերեւս աւելի գործ տեսած, աւելի շատ խնդիրներ ուսումնասիրած էք քան ես ամբողջ կեանքիս մէջ··· բայց ես տղայ մըն եմ··· գիտէք··· և կանխաւ համոզուած եմ որ շատ պիտի յանդիմանէք զիս։

Պելէն նախ չպատասխանեց։ աչուընեն առջեւը սեւեւած, առանց ժաքին երեսը նայելու, իր սովորական ջղային չարժումովը կիսամօրուսները կը քաշէր։

(Շարունակէլի)

նել և ինք պատասխանելով ապանեց երկու գայտորներն, հայը և որդի։ Կը յիշուի թէ ֆրանսական իշխանութիւնք, տեղացիներն հարցաքննելով, տարբեր տեղեկագիր մը տուած էին յառաջագոյն։

---

ՌՈՒՍԻԱ.—Ռուս կառավարութիւնը պաշտօնապէս հաղորդեց Շիքագոյի Արուեստահանդէսին թէ տարւոյս սկիզբը Ռուսիոյ մէջ երկաթուղիք այս վիճակին մէջ էին։—33,058 քիլոմէդր երկաթուղի շինուած էր որ և կը գործածուէր հասարակութեան կողմէ, (մասնաւորաց երկաթուղիներէն զատ, որոց ագարակներուն և գործարաններուն մէջ միայն կը բանի։) Այս գիծերէն 29,677 քիլոմէդր Եւրոպական Ռուսաստանի մէջ, 1,433 քիլոմէդրն Ասիոյ մէջ և 1,928 քիլոմէդրը Ֆինլանտիոյ մէջ։ Պետութիւնը կը մատակարարէ 14,384 քիլոմէդր, ընկերութիւնք՝ 18,674 քիլոմէդր։ Դան ընդ ամենայն 6,933 վայրաշարժ (լոկոմոթիվ) 7,759 կառք ուղեւորաց, 284,892 հոգւոյ համար տեղւով, 145,611 կառք բեռներու համար, 1,449,680 տաղառաչափ բեռ կրելու կարողութեամբ։

---

ՌՈՒՍ ԲԱՆԱԿԻՆ չուտափոյթ զօրանալութիւնը պատրաստելու համար, որպէս զի երբ պատերազմ ըլլայ ամէն բան իւր տեղը պատրաստ գտնուի և ժամանակ չկորսուի, Քեմերսպուրգի զինուորական շրջանակին հրամատար Վլատիմիր մեծ դուքս, եղբայր Զարին, անցեալ շաբթուն հրամայեց որ հրետանւորաց և պահեստի զօրաց ամէն մեծ բանոցք անմիջապէս քննուին։ Զի հոն կը բովանդակին ամէն զօրագնդի զէնքերն և հագուստներն որչափ որ պէտք կրնայ ըլլալ բովանդակ բանակը զէնքի տակ առնելու համար։ Ուրիշ անգամներ ստուգուած է թէ այս մեծերանոցներն եւ անոնց պարունակութիւնը թղթի վրայ միայն գոյութիւն ունին, և այս կերպիւ ծանր գողութիւնք երեւան հանուած են պարբերաբար։

# ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

*Մայրաքաղաքս հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Աղթամարայ Ամէն։ Տ։ Խաչատուր կաթողիկոսը ծանրապէս հիւանդ է։*

---

*Կրօնական ժողովն երէկ ի նիստ գումարուելու։ ի Պարիզ՝ Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեանի և զրաղեցաւ անհատական ու ամուսնական խնդիրներով։*

---

*Մայր եկեղեցւոյ թաղական խորհուրդն՝ Աղգ։ Վարչութեան մէկ յանձնարարութեանը համաձայն՝ եկեղեցւոյ հասուլիից և ծախսուց եկամտացոյցը պատրաստած և ընդարձակ տեղեկագրով մը հաղորդած է Տնտեսական Խորհրդոյ, որ իւր այս օրուան նստի մէջ նկատութեան պիտի առնու զայնս։ Թաղական խորհուրդն այդ տեղեկագրով ընդարձակ դիտողութիւններ կընէ կատակաքաժիններու վճարմանց մասին և անօրինութիւն կը խնդրէ։*

---

*Ցայսմանէ է թէ Պոլսոյ էթի Մէյտանը թաղին մէջ ազգ։ վարժարան մը կայ, որ կը մատակարարուի մանաւոր հոգաբարձութեան մը ձեռամբ՝ Մայր եկեղեցւոյ թաղական խորհրդոյ հսկողութեանը տակ և ամսական նպաստներ կընդունի Պատրիարքարանի ու Մայր եկեղեցւոյ անտուկներէն։*

*Ազգ։ Մայր եկեղեցւոյ թաղական խորհուրդն երկու ամէ ի վեր այդ նպաստը դադրեցուցած ըլլալով, վարժարանին հոգաբարձութիւնը խնդրագրով մը Ազգ։ Վարչութեան դիմած և խնդրած է տնօրինութիւն մը ընել։*

---

*Թիֆլիզի ԺԵՐԹԵՐԷՆ՝*

*Հինգշաբթի՝ Նոյեմբերի 4ին՝ հայ դերասանական մշտական խումբը ներկայացուց մեր յայտնի դրամատուրգ Գ. Սունդուկեանի Ամուսիններ կոմեդիան։ Առաջին անգամ այս կոմեդիան ներկայացուցուի է երեք տարի առաջ։ Այժմ տպագրուած լոյս է տեսել և բաւականին փոփոխուած։*

*Թատրոնը գրեթէ ամբողջապէս լիքն էր։ Խաղն անցաւ շատ կենդանի։ Դերակատարները բարեխղճութեամբ ասղուրել էին իրանց դերերը։ Հասարակութիւնը բազմիցս ծափահարութեամբ բեմ կանչեց Տիկին Հրաչեային, Պ. Պ. Պետրոսեանին, Աբելեանին, որոնք աւելի աչքի էին ընկնում իրանց խաղով։*

*Երկրորդ արարուածից յետոյ բուն ծափահարութեամբ բեմ կանչուեց հեղինակը։ հասարակութեան կողմից յարգելի դրամատուրգին ծաղկեայ պսակ նուէր բերին։*

*Ներկայ սեզոնի մէջ սա առաջին ներկայացումն էր իւր կենդանութեամբ։*

---

*Մօտակայ գաւառի մը մէջ պաշտօնավարելու համար գոհացուցիչ ամսականաւ գրագրի մը պէտք կայ, ամսարակալութեան հմուտ և առեւտրական գործոց մէջ փորձառու։ Դիմել Արխ։Էլչի Խմբագրատունը։*

917 2—10

## ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՏԱՂԱ ԵՒ ՔԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ. զին տասնեւհինգ ՀՉ։ ՊԱՏԱԿԵՐՆ. զին 3 ղրշ։ Մէ շինողը եւ մէ շինողատուողը պատասխանատու են։ Տ. Հմայեակ քահանայի կինքը չկրող օրինակներն կեղծ պիտի համարուին։

ԸՆԴԱՐՁԱԿ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆ. բաժանորդագին 8 ղրշ։ յետ տպագրուելեան 10 ղրշ։ առաջիս ֆօռման հրատարակուած է եւ օրի կը տրուի փափաքողաց։

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՊՍԷՐՏԵԱՆԻ

ՏԱՐԵՐՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ. Ա. հատոր, պատկերազարդ, ծայնագրեալ երգով։ զին 3 ղրշ։

ՏԱՐԵՐՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ. Բ. հատոր, պատկերազարդ, ծայնագրեալ երգով։ զին 4 ղրշ։

ՇԻՆԵՆՔ ՁԵՄԱՐԱՆԸ. Սկիզբտարու ձեմարանի վերաշինուելեան համար տեսր։ զին 2 ղրշ։

ՇԻՆԵՆՔ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ. Իւսկիւտարու գերեզմանատան շինուելեան համար տեսր։ զին 2 ղրշ։

Դիմել Պալենց զրատուն, ի Գ. Պոլիս, Զաքմաքըլար եօզուշը։ Թիւ 20։ 900 3—10

# Մենորին Հուրներ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ։—Պարսի առաջին տրուեցաւ վերաքննիչ ատենի առաջին նախագահ Շեվդը պէյ և Պոլսոյ նախնական դատարանի հարցաքննիչ դատաւոր-անդամ Թէյդի պէյ։

Իւրաքանչիւր առաջին՝ Դատական Նախարարութեան պատժական գործոց տնօրէն Էվին պէյ։

---

Առաջին կարգի Օսմանիէ պատուանշան տրուեցաւ Դատական նախարարութեան խորհրդական Հայիմ պէյ։

---

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ։—(Պաշտօնական Զեկոյցով) Նոյեմբեր 22ի երկուշաբթի իրիկուան ժամ 10էն մինչեւ Նոյեմբեր 23 երեքշաբթի իրիկուան ժամ 9, մայրաքաղաքիս մէջ քսերեսէ չափանը ընդ դէպքեր և պատ մահեր պատահած են։ Առաջուան հիւանդներէն ալ եօթը մեռած են ու տասնեւմի ապաքինած։ Աւասիկ մանրամասնութիւնները։

Օրթաքէօյ՝ մէկ։ Վարակեալն է Այէքսի (Թրամուէյի կառապան)։

Պոլոյ Մէյտանճրք թաղին մէջ՝ մէկ։ Հասան Ալի (ձիավար բեռնակիր)։

Գասրմ Փաշա՝ վեց։ Նուսուֆ (ձիավար), Անարէա Սբիրօ (քանջարավաճառ), Խրիսթօ Եանել (ոգելից բմպելեաց գործարանատեր), Խրիսթօ Նէքօլա (բանջարավաճառ), Խարալամպօ Եօրտան (խոհարար) և Վասիլ Թէոտորի (նպարավաճառ)։

Էյուպի Համիտիէ գիւղին մէջ՝ ութ։ Էմինէ, Հիւսէյին (խաղուէճի), Օսման Ապտուլլահ (հիւանդանոցի սպասաւոր), Շերիֆէ, Իսմայիլ Մէհմէտ (թէրլիքճի), Բուպկէյ, Նուրի Մէհմէտ եւ Ալի (գործաւոր) Դեռաց։

Թոփխանէ՝ երկու։ Զէրքէս Հասան (գործաւոր) Դեռաց, և Գասրմ Սիւլէյման (բեռնակիր)։

Հայտար Փաշա՝ մէկ։ Ալի Սանքօ (գործաւոր) Դեռաց։

Բերա՝ երկու։ Գաթէրինա Անտօն (սպասուհի) և Մարգար Պոլոսեան (կառապան)։

Սկիւտար՝ երկու։ Յարութիւն Առաքելեան (պայտարի աշակերտ) և Մարկոս Ստեփանեան (օրմնադիր)։

Պէշիքթաշ՝ երկու։ Մանուկ Պաղասարեան (սրմնադիր) և Բրօտրօմօս Եօրտան (քարակոփ)։

Կայս։ անձնապահ զօրաքանակէն՝ երիք։ Ճիհան Մէհմէտ (զինուոր), Իսմայիլ Ալի (զինուոր) և Իպրահիմ Ալի (զինուոր)։

Այյասօֆիա՝ մէկ։ Օսման (քաղնիքի սպասաւոր)։

Թաթավլա՝ երկու։ Եօրկի Անաստասատի (դեղագործ) Դեռաց և Եորկի Տանիէլ (սափրիչ)։

Գուպիսնճուք՝ մէկ։ Նիսիմ (թիթեղագործ) Դեռաց։

Զինուորական նուագածուաց խումբէն՝ մէկ։ Մուսթաֆա Իպրահիմ (զինուոր) Դեռաց։

Բարի զօրանոցէն՝ մէկ։ Մուսթաֆա Հասան (զինուոր) Դեռաց։

Խաքէօյ՝ երկու։ Միւնիրէ և Հագգը։

Տիպէք Ճատտէսի՝ մէկ։ Վէնթուրա Մօշօն։

Ցէներ՝ մէկ։ Ֆանի։

Ֆաթիհ՝ երկու։ Հաֆըզ Օսման Հասան (Մէտրէսէի ուսանող) Դեռաց և Մուպատէս Հասան Դեռաց։

Ֆընտրգլը՝ մէկ։ Ալի (գործաւոր)։

Զուքար Զէյտէ՝ մէկ։ Խաչիկ Խաչկեան։

Սիրքէճի՝ մէկ։ Ահարոն Յարութիւնեան (Բէժիի գործաւոր)։

Շիշլի՝ մէկ։ Պօղոս Սահակեան (գործաւոր)։

Եէնի-Գուլէ՝ մէկ։ Մարգար Ստեփանեան (խամուչքեար)։

Զաքմաքճըլար՝ Մուսթաֆա Փաշա խան՝ մէկ։ Մկրտիչ Կարապետեան (բեռնակիր)։

Զիլիֆտար՝ մէկ։ Յակոբ Մանուկեան (քարափանց ընկերութեան գործաւոր)։

Ալտուն Զարշը՝ մէկ։ Եանի Ժունօ (դեղագործ)։

Մահմուտ-Փաշա՝ մէկ։ Թէօտորի Բէյքի (կօշկակար)։

Բէրբէմպէ-Բազար՝ մէկ։ Տիմիթրի Եորկի (վերմակագործ)։

Ղալաթիա՝ մէկ։ Իլիա Եուվան (ապահը)։

Շահդատէ Պաշը՝ մէկ։ Եուվան Բօսթանթէն (կօշկակար)։

Բիւչիւկ Բազար՝ մէկ։ Ալէքսանտրա Եանքօ։ Բիւրքճի խան՝ մէկ, Թէօտորի Ստեփան (ապահի աշակերտ)։

* * *

Առաջուան բռնուածներէն մեռած են։

Թաղապետութեան Զ։ շրջանակի մասնաւոր հիւանդանոցին մէջ՝ մէկ։ Ապտիւրրահման (գործաւոր)։

Հայտար Փաշայի հիւանդանոցին մէջ՝ մէկ։ Մուրատ Մէհմէտ (ոստիկան-զինուոր)։

Գալաթա Զէյտէ՝ Եօնուս Հասան (գործաւոր)։

Էյուպի Համիտիէ գիւղին մէջ՝ մէկ։ Հասան Եապուպ (կառապան)։

Պէշիքթաշ՝ երկու։ Իսմայիլ (քաղնիքի սպասաւոր) և Գօգմա Եանի (քարակոփ)։

Գասրմ Փաշա՝ մէկ։ Անաստաս (բանջարավաճառ)։

---

Ի ԿԱՑՍ։ ՊԱՀԱՏ։— Բարձր։ Մեծ-Եպարքոսը, Բարձր։ Սպարապետն և Եվդոքիմ, Ծովային գործոց ու Կրթական Վեհմ։ Նախարարներն երէկ կայսերական երիտասարդին ստացան Վ.Եհ։ Սուլթանի հրամանները։

---

ԵԼՄՏԱԿԱՆ Նախարարութիւնը բոլոր կուսակալաց և կառավարիչներուն զրկած է ոչ-մահմէտական հպատակներէ առնուած զինուորական տրոց վերաբերեալ կանոնագրոյն տպագրեալ օրինակներն, յանձնարարելով որ նոյն տրոց վերաբերեալ գործերն այդ կանոնագրոյն համաձայն տեսնուին։

---

ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ։—Պ։ Քանպօն որ Ֆրանսայի Բօգաւառը կը գտնուէր ժամանակէ մը հետէ, երէկ Բարիզ պիտի երթար նոր նախարարութեան հետ հաղորդակցութեան մտնելու։ Հաւանաբար, ֆրանսական դեսպանը դեկտեմբերի առաջին չաբթուն մայրաքաղաքս դառնայ։

—Գերմանական դեսպանն ու դեսպանուհին նախընթաց գիշեր հացկերոյթի մը ատին որուն ներկայ գտնուեցան ռուսական դեսպանն ու տիկին Նելիւոֆ, աւստրիական և ռումանական դեսպանները, սերպիական դեսպան Վէլիմիրովիչ գնդապետը, Ֆոն տէր Կոլց փաշա և Հօպէ փաշա՝ իրենց տիկիններով, և այլ հրաւիրեալք։

—Անգլիական դեսպան Սըր Ֆլառ Ֆոռտ վաղը կը մեկնի մայրաքաղաքէս, Մէտաժըրի-չոգենաւով։

---

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ.—Նոյեմբեր 21էն 22, Տրապիզոնի մէջ քսերեակ 24 դէպք և հին ու նոր բռնուածներէն 15 մահ։ Զինուորներէն առաջուան բռնուածներէն մէկ մահ։ Խարսիբէօյի մաքրանոցին մէջ հին բռնուածներէն մէկ մահ։

—Նոյեմ։ 20էն 21, Քէսօթահեաի մէջ քսերեակ 10 դէպք, ասոց 7ը մէկ քանի օր առաջ բռնուած։ Առաջուան բռնուածներէն 4 մահ։

—Իզմիրի ու Նահանգին միւս կողմերուն մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

—Նոյեմ։ 20ին Քէրպէլայի մէջ՝ մէկ մահ և Հինայէի մէջ՝ մէկ մահ։

—Նոյեմ։ 21էն 23, Գոնեաի Արզիտիանը գիւղախումբին մէջ առաջուան հիւանդներէն երկուքն ապաքինած են։

—Պասրայի մէջ Նոյեմ։ 19էն 20, քսերեակ դէպք ու մահ չէ պատահած։

---

ԴԱՏԱՍՏԱՆ։—Ինչպէս յայտնի է, անցեալ օրուան պաշտօնական յայտարարութեամբ ծանուցուած էր որ քսերեակ վարակեալի մը դատմանման պատճառն եղած բժիշկները իրենց պարտականութեանցը մէջ թերանան, հիւանդին տերերը կրնան ձեռնհաս իշխանութեան դիմելով դատ բանալ բժիշկին դէմ։ Պոլսոյ պատժական Ա։ դատարանը չաբթի օրը դատեց Սկիւտարի թաղապետական բժիշկ Հիւսնի պէյն ու դեղագործ Սիմաւորքի էֆէնտին, որոց դէմ բողոքներ եղած էին թէ մէկ քանի հիւանդներու ՁԱՍԱԿԱՐ ու մահացու դեղեր տալով՝ անոնց մահուանը պատճառ եղած են։ Հիւսնի պէյ ու Սիմաւորքի էֆէնտի իրենց փաստաբան կարգած էին Իպգէյմ Նազ։ էֆէնտին։ Անձնական դատախազներն էին վախճանեալ Ալի էֆէնտիի զոքանչն ու աղջիկը։

Հարցաքննիչ դատաւորին տեղեկագրերը կարդացուելէ ետք, դատաւորութիւնն սկսաւ։ Անձնական դատախազներու յայտարարութիւններէն և ամբաստանեալց անձնապաշտպանութենէն յետոյ՝ վկայները լսուեցան։

Դատաւորն որոշեց բերել տալ դեղագործ Սիմաւորքի արձանագրութեան տումարներն և հրաւիրել գնդապետ Սիթրաքի էֆէնտին և դեր-գնդապետ Թէրխան ու օգնականը՝ Հիւսնի էֆէնտիները։ Նոյնպէս տեղեկութիւն ուզել թաղապետական շրջանակէն այն տեղեկագրերուն վրայ զորս Հիւսնի պէյ տուած էր։ Միանգամայն որոշեց հարցնել բժշկական վարժարանին թէ Ալի էֆէնտիի համար տրուած դեղը առողջութեան ՁԱՍԱԿՈ՞Ր էր թէ ոչ, և թէ ամբողջութեամբ տրուելէն կրնա՞ր ՁԱՍ մը յառաջ գալ թէ ոչ։ Հետեւաբար դատին շարունակութիւնն այս օրուան յետաձգուեցաւ։

---

ԶՄՇԿԱՆԱԳԻ և Զաբանճաքի կարօտ ժողովրդեան սիրմի համար արմտիք բաշխուելու նպատակաւ Բարբերդի կուսակալութեան կողմէ պաշտօնեայներ զրկուած են այդ գաւառակները։

---

ՍԿԻՒՏԱՐԻ Նուէ Գույուսը թաղը գրտնուած Զէյնէպ Քէամիլ անուն կանանց հիւանդանոցին տնօրէն Ալի էֆէնտի մեռած ըլլալով, անոր յաջորդած է Շերքեթի Խալրխէի գնմանց պաշտօնեայ Բեհամի էֆէնտի, պահելով հանդերձ իւր սոյն պաշտօնը։

---

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ։—Ատանայի մէջ Զերքէքի հագուստ կրող Օհան և ընկերը ձեմալ ու Բիւչիկ Մուսա անուն աւազակներն, որք Բայազիտ Ազիզլու գիւղէն Թուրանտաղը Դերգրի աղջիկը բռնաբարած էին, ձերբակալուեր են։ Ատանայի կուսակալութիւնը խնդիրը տեղեկագրած է Բ. Դրան։ Բարձր։ Մեծ-Եպարքոսն հրամայած է կուսակալութեան՝ որ այդ անձինք ձերբակալուելու պահուն իրենց կրած հագուստներով մայրաքաղաքս զրկուին, հոս հրապարակաւ դատուելու համար։ Ըստ այնմ, այդ անձինք յատուկ պաշտօնեի մը հսկողութեամբ մայրաքաղաքս բերուած են։

(Սոսպէնս)

---

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ։—Աւասիկ վերջին հոկտեմբեր ամսուան միջոցին մայրաքաղաքիս մէջ պատահած մարերու վիճակագիրը, առողջապահական վարչութեան արձանագրութիւններէն քաղուած։

| | այր | կին |
|---|---|---|
| Իսլամ | 206 | 274 |
| Քրիստոնեայ | 190 | 132 |
| Հրեայ | 40 | 44 |
| | 436 | 450 |

համագումար 886 մահ, որոց հինգը ծաղկախտէ։

1892 հոկտեմբերին պատահած մահերու թիւն եղած էր 678 (որոց 9ը ծաղկախտէ) որով այս տարուան միևնոյն ամսուան մէջ 208 մահ աւելի պատահած է։

---

ԻԶՄԻՐ գտնուող Պէնկազիի գաղթականաց ի նպաստ հանգանակութիւններ կատարելու համար՝ կայս։ Իրատէի մը համաձայն՝ յանձնաժողով մը կազմուած է ընդ նախագահութեամբ Վահմ։ կուսակալին։ Այդ յանձնաժողովս անդամներէն Ապտիւլգատէր փաշա 40 ոսկի նուիրած է այդ նպատակին համար, Սատրգ պէյ՝ 60, փաստաբան Գէորգ Պուպլի էֆէնտի՝ 20, Արապեան Կարապետ էֆէնտի՝ 40 և Հաճի Բօսթաքի էֆէնտի՝ 15։

---

ԵԳԵՍԻՈՑ հաշուակալ Ֆաթգ էֆէնտի, առաժամաքար պաշտօնէ դադրեցուցուած և Հալեպ կոչուած էր իրեն դէմ եղած բողոքներու մասին քննութիւններ կատարուելու համար։ Գաւառին Իտարէի ժողովոյ հարցաքննիչ դատաւորն Ֆաթգ էֆէնտիի համար դատաստան տեսի չունենալու որոշում տուած ըլլալով, նոյն ժողովոյ ուրոշմամբ իր պաշտօնին մէջ վերահաստատուած եւ Եգեսիա վերադարձած է։

---

ՍԷՂԱՆԻԿի երեւելիներէն Համտի պէյի երկրագործական չքաղաքմամբ շնորհուած է։

---

ՊԵՏԱԿԱՆ Խորհուրդը խորհրդակցութիւններ կը կատարէ թէ Թէնպէքիները բաքէներո՞ւ մէջ թէ բաց պէտք է ծախուին։

---

ԱՂԲԻՒՐԻՆԵՐ։— Զեահնա իշխանութիւնը հրահանգ տուած է որ մայրաքաղաքիս ու արուարձանաց մէջ գտնուած բոլոր աղբիւրներու ջրամբարները պարպուելով մաքրուին։

---

ԱՐԿԱԾ։— Երէկ կէսգիշերէի կողմը անծանօթ մարդ մը ջրհորի մը մէջ իյնալով մեռաւ։

---

ԹԷՆՊԷՔԻի Բէժիին տնօրէն Պ։ ոը Զօկէպ գերակոմն իր տեղակալ հետ երէկ Ադիքսանդրիա ուղեւորեցաւ։

---

ՄԷՐՍինի նաւահանգիստը անցեալ սեպտեմբեր ամսուն 38 նաւեր ժամանած են։ Նոյն նաւահանգիստը հասնող ուղեւորաց թիւն է 846 և անտի մեկնողներունը՝ 3073։

---

ԱՔԵԱի մէջ ծաղկախտ երեւան եկնելով մեծերէն ու փոքրերէն 15 մահեր պատահած են։ Պերութէն զրկուած բժիշկներու ու դեղերու շնորհիւ հիւանդութիւնն անհետանալու վրայ է։

---

ԳԱՐՍՏԱՂի իշխանին թիկնապահ զօրավար Բօքօվիչ Լիբօվիչ երէկ Օռեսէն մայրաքաղաքս եկաւ։

---

ՊՐՈՒՍԱՅ Պատժական ատենքը տասնը հինգ տարուան չդիմակալ աշխատութեան դատապարտած է Մուխթար անուն պարսիկ մը, որ տեղւոյն պարսկական հիւպատոսը վախճանեալ Էհատուլլահ պէյի աղջիկն սպանած և մայրն ու հօրուն վիրաւորած էր։

---

ՏԱՂ ԱՐՏՐ հանքի շահագործումը Ծովային գործոց նախարարութեան տրուած էր, որ հարիւրին տասը համեմատութեամբ տուրք մը պիտի վճարէր ելմտական նախարարութեան։ Արդ, կայս։ Իրատէ մը հրամայած է վերցնել այդ տուրքը։

---

ԲԱՐԲԵՐԴԻ Ագչէտաղ գաւառակէն կը գրեն թէ Ալօ, Բէլթ, Հաոս, Տիվրիկի Մէհմէտաղը Հասան և Ալի անուն աւազակներն, որք այդ գաւառակին մէջ կասպատակէին, ձերբակալուեր են։

---

ԳԱՐԹԱԼի կողմն անցեալ գիշեր Սալիհ անուն ծխախոտի մաքսանենգ մը ձերբակալուեր է իր քով գտնուած վեց բեռ ծխախոտներով։

---

ԷՆԿԻՐԻՔԻՆ կը գրեն թէ բարեբեր անձրեւներ տեղացած ըլլալով՝ երկրագործք գործի սկսած են և կը յուսացուի թէ յաւելիկայ տարուան հունձքը առատ պիտի ըլլայ։

---

ԵՒԴՈԿԻՈՅ Էրպաա գաւառակին մէջ բէժիի դէտերու և ծխախոտի մաքսախոյսերու միջեւ կռիւ մը տեղի ունենալով, դէտերէ մին սպանուեր և միւսն ալ ծանրապէս վիրաւորուեր է։ Եւդոկիական ոստիկանիներ զրկուեր են մաքսախոյսերը ձերբակալելու համար։

---

ՍՕՏՂԻՆ նահանգին համանուն գաւառին ձիթապտուղի տասանորդի տուրքը վարձակալութեան տրուած է 1,900,000 դրուշի։

---

ԵՂԵՌՆԱԴԱՏ ատեանն երեքական տարուան չդիմակալ աշխատութեան դատապարտեց Պէքիր, Իսմայիլ ու Խալիս անուն անձերն, որք տուն մը մտնելով գողութիւն ըրած էին։

---

ՍԵԲԱՍՏԻՈՅ նախնական վարժապետանոցին այս տարուան քննութիւնք կատարուելով ինը չբաւականարտներու վկայական տրուած է իբրև նախնական վարժարանաց ուսուցիչ։ Այդ առթիւ բարեմաղթութիւններ եղած են վսան կենաց Վեհ։ Սուլթանին։

---

ՓՅԽՍՏԱԿԱՆ ԱՐՋ ՄԸ.—Այս միջոցիս Իզմիրի գնչուները արջեր կը տանին Պերդամա և չուկային մէջ կը խաղցուենն։ Անցեալները, կէս գիշերին, այս անբան հրապիտներէն մէկը խոյս տալով իր գտնուած տեղէն՝ կը սկսի քաղաքին փողոցները ժուռ գալ։ Ցանկարծ, փողոցի մը մէջ մարդու մը կը հանդիպի և իր թաթերը վերցուցեալով անոր վրայ կը յարձակի։ մարդը այս անակնկալ ու թիրտ գիրկընդխառնումէն զարհուրած, կը սկսի աղաղակներ արձակել և հասած օգնութիւններուն շնորհիւ անձնաս կ'ազատի արջին գգուանքէն։ Բայց քաղաքին շուները իրար անցած էին գիշերային այս անհեթեթ թափառականին երեւումէն, և, միահամուռ, կը հարձէին դայն։ Արջը ինքզինքը դուրս կը նետէ քաղաքէն, և ետեւէն ինկողները քանի մը ձեռք զէնք կը պարպեն վրան։ արջապանը, որ նշմարած էր իր անասունին բացակայութիւնը, խենդի պէս դուրս կը նետուի, ու վազելով անոր ետեւէն՝ հրամայական բացագանչութիւն մը կ'արձակէ։ արջը, հնազանդ, ետ կը դառնայ փոքը դնելով ալ գիշեր ատեն պտոյտի չելլել։

---

ԲՕՆԲՕՐՏԻՍ.

Ամէն ազգի երգչուհիներու յուցահանդէս մը կը շարունակուի ի տես գալ Բօնքօրտիայի բեմին վրայ։ Այս գիշեր՝ առաջին անգամ պիտի երգէ ռուսիանացի երգչուհի մը՝ Օր։ Անթօնիօ, և մտ օրէն ալ հունգարացի երգչուհի մը, կամ նոյն իսկ Բօնքօրտիայի Տնօրէնութեան յայտագրին նայելով, Մէլիթա։։։ կոմա։։Էլ։

Ցառաջիկայ հինգշաբթի գիշեր, Պ։ Թէմիթօֆլի առաջնորդութեամբ, բանտոմիմայի խումբ մը, 14 դերասաններէ ու դերասանուհիներէ բաղկացեալ, պիտի սկսի ներկայացումներ տալ։

---

ՇԲՋԱԲԵՐԱԿԱՆ

Պատիւ ունիմ ձեզ ծանուցանել թէ՝ բացի մեր ժամացոյցի վաճառատունէն մասնաւոր մթերանոց մը հաստատած եմ ի Սուլթան Համամ Սպիտիէ խան առաջին յարկ թիւ 6 ուր միմոյսն մեծաբանակ վաճառում պիտի ըլլայ։

Մթերանոցս կը գտնուին ֆրանսական, զուիցերական, եւ ամերիկեան ոսկի, արծաթ եւ մետաղեայ ամէն տեսակ ժամացոյցներ, պտտի եւ թնոսոլի բազմազան բանտիլներ ինչպէս նաեւ ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շղթայք եւ զոհարեղէններ։

Մեր գլխաւոր ջանքը պիտի ըլլայ հրապարակի վրայ տիրող գիներէն ազատ ծախել եւ այդու կարենալ կարելի եղածին չափ շուտ ընդարձակել մեր յարաբերութիւնները Թուրքիոյ ամէն մասերուն հետ։

Կը խնդրեմ որ հաճիք մի անգամ դիմում ընել մեր նորաճառատ մթերանոցը եւ վստահ եմ թէ մեր մշտական յաճախորդը պիտի ըլլաք։ պատրաստ ենք ի հարկին տեղեկութիւններ տալ մեր արտ։ այլ տպրանաց գիներու մասին։

Գ. Ի. ՍԷԼՎԱՆԵԱՆ

Ծանօթ։ Մեր ժամացոյցներէն հատով գնել փափաքողք կրնան դիմել մեր վաճառատունն ի Մահմուտ Փաշա շուկայի դրան ճիշդ դիմացը Թիւ 3։ 920 1—3

# ՀԵՌԱԳԻՐ

## ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՊԵԼԿՐԱՏ, 5 Դեկտ։—Սալա Կրուիչ զօրավարին յանձնուեցաւ նոր նախարարութիւնը կազմելու պաշտօնը։

ԼՈՆՏՈՆ։—Մանչեսթրա հեռագիր մը կը հրատարակէ Շանկայէ, ծանուցանող թէ Զինաստան կը պատրաստուի ուժ տալ անգլիական քաղաքականութեան ի Սիամ։ Անգլիական չորս նաւեր և քանի մը չինական նաւեր Պանկոկ ուղեւորեցան։

ՓԱՐԻԶ։—Ստորին Սէնի նահանգին եռիսփոխան Պ։ Լըպօն գաղթային նախարար անուանեցաւ։

—Կ։ Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան քարտուղար Պ։ Պոնտատէ առաջին քարտուղար անուանեցաւ ի Բօսթ-օ-Բրէնս (Հայիթի)։ Պ։ տը Պլինիէռ իրեն կը յաջորդէ ի Կ։ Պոլիս։

ՀՌՈՄ։ — Ծանարտէլլիի նախարարութիւնը կազմուեցաւ նախապէս հեռագրուած ձեւով, բայց Պ։ Պոգէլիէ որ չընդունեց ելմտական նախարարի պաշտօնը։

# Վանդակ

ԴԱԼԱԹԻԱ, 24 Նոյեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈՐՁԱՆԱԳՐՈՅ

| | | |
|---|---|---|
| 3 ամիս Լոնդրայի վրայ | | 110 |
| 3 » Փարիզի » | | 22 90 |

ՕՍՄԱՆԵԱՆ ՊՈՆԹՕՍԻՍ

| | | |
|---|---|---|
| Եվկ երկրոյ գոց. (Միաց. Դ։ Սէրի) | | 24 23 ½ |
| Բիրայի մէջ | » | — — |
| Ռաւտուտն բացուելեալ | » | 24 24 ½ |
| Կէս օրին | | 24 24 ½ |
| Թանվիրաքը Օսմանիէ. երկ. երկոյ | | — — |
| » » ժամ Տ.ին | | — — |

ՀԱՆԹԱՑՔ ԱՐԾԱԹԱՓՈՒՂ

| | | |
|---|---|---|
| Փոխա։ Զիր։ | Մէրի | 57 |
| » | » | 35 |
| » | » | 26 30 |

ԲԱԾԵՆԵՍՈՒՄԲ

| | | |
|---|---|---|
| Սօսիկ Ալ. Ժէնիւրալ | Անգլ. Լր. | — — |
| Քրէտի Ժէնիւրալ | » » | 7 20 |
| Գանք տը Ֆրանս | » » | 3 05 |
| Օսմ. Շանտ է Ֆրանս | » » | 4 10 |
| Բէժի | Օսմ. Ոսկի | 17 38 |
| Թրամուէյ | » » | 575 |
| Օսմ. Ապաստանարան. Ընկ | » » | 310 |
| Բուլգարի երկաթուղի | Ֆր. | 90 50 |
| Բաձենեռնոյ Լաւրիոմի | | 39 |

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՎ

| | | |
|---|---|---|
| Օսմանեան ոսկի | գրշ. | 100 |
| 20 ֆրանկանոց | » | 87 19 |
| Անգլիական ոսկի | » | 110 09 |
| Մարք (Գերմանական ոսկի) | » | 107 17 |
